

կպարդէին դորա ինչ աղբիւրից հանած լինելը. բայց որովհետեւ չեն գտնուում մեզ մօտ այլ ևս նորա յիշատակած մատենագրութիւնք, վասն որոյ շնորհակալ պիտի լինիմք նորանից որ պահպանելու հասուցեր է մեզ նոցա հեղինակութիւններէից զոնէ քանի մի հատուածներ:

Նոյնը կարելի է ասել և Մեղացւոց թագաւորաց. որպէս և Կիւրոսի պատմութեան վերաբերութեամբ: Հայ պատմիչք Պարսկաստանի Երշակունեաց մասին բաւականանում են հարեանցի տեղեկութեամբ միայն անցնել, այն ինչ նոքա նոցա առաւել պարտաւոր էին ծանաչել քան արեւելեան միւս ցեղերին, վասն զի Հայաստանը գրեթէ միշտ նոցա հետ քաղաքական յարաբերութեանց մէջ է եղեր և նոցա ցեղից սերուած թագաւորներով է կառավարուէր. նա մանաւանդ երբ այս ցեղի իշխանները Պարսկաստանի Սասանեան ցեղից աթոռազուրկ լինելով խրմբովէն դիմել են Հայաստան, ուր իրենց ազգականներէից ընդունուէր և ստացեր են նոցանից այն տիրապետութիւնք, զորս պաշտպանել են իրենց սերունդք շատ դարեր ևս յետոյ: Նոյն իսկ Հայաստանի Երշակունեաց պատմութիւնն արդարեւ բաւականին մութն և շատ կետեր է յառաջադրում, որոնք խիստ քննութեան ենթարկուելու անընդունակ են և զորմեծ ուշադրութեամբ քննել կհարկաւորէր: Բաց յայդմանէ այդ պատմութիւնը ժամանակագրական գրեթէ անմեկնելի դժուարութիւններով լի և շատ տեղ ևս Յունաց և Ասորիաց ժամանակակից մատենագրաց աւանդած իրողութեանց միանգամայն հակառակ է: (Երանոս)

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՄԱՍՆԱԲԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ի 17 ամսոյս ի վանս Հառիճոյ Վ. հ. Հայրապետ մեր Վարդապետութեան Մասնաւոր Իշխանութիւն տուաւ ձեռնասուն աշակերտի Իւրում Վահրամ Երեզայի Մանկունեոյ:

Վ. Է. ՀԱՅՐԱՊԵՏ.

Վ. հ. Հայրապետ մեր մտադիր է յառաջակայ Սեպտ. ամսոյ ց15-ն վերադառնալ ի Հառիճոյ այսր ի Մայր Եթոսս ի Ս. Լ. ջմիածին:

Ի Թ. Է. ՐԱՆԷ.

Ի Թ. հ. հրանէ ստացեալ մի գրութենէ քաղելով հետեւեալ տեղեկութիւնքը և արժան կհամարիմք հաղորդել մերազնեից:

Հնդկ. և Պարսկ. Հայոց Եռաջնորդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Յովհաննէսեան ի 1-ն անցեալ Յունիս ամսոյ ի Թ. հ. հրանէ 3 ժամաւ հեռու ի Նիսիսիս կոչեալ արքայական ամարանոցն Պարսից Օգոստ. Հահին ներխայնալոյ պատիւն ունեցած է կարի վայելուչ ընդունելութեամբ:

Օգոստ. Հահին իւր ձեռամբ ընդունելով Վ. հ. Հայրապետի մերոյ նամակը*) ի ձեռաց Գեր. Գրիգորիս Եպիս-

(*) Այս գրութեան թարգմանութիւնը հրատարակուել է Թ. հ. հրան քաղաքի Իւր. (Պարսկաստան) կոչեցեալ պաշտօնական լրագրի մէջ:

կոպտսի՝ և ապա երկու ձեռքով բռնած՝
 « ընդունեցի, ասել է, բայց յարգանք,,
 և ապա բարեհաճել է հարցանել Սրբազ-
 նազոյն Հայրապետի որպիսութիւնը. ո-
 բում պարտուպատշաճ պատասխանները
 յարգանք փոխանակած է Նորին Գերա-
 պատուութիւն, և խօսակցութիւնն և տե-
 սակցութիւնն սովորական ներկայացմա-
 նէն աւելի պատուաւոր և ցվերջ խօսա-
 կցութեան առանց թարգմանի եղել է:

« Տեղս (ի Թէհրան) Հայոց երկու եկեղեցի կայ,
 մինն Շահաբէ ապաթէ-աղի՝ անուանեալ թաղի
 մէջ յանուն սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի,
 և միւսն Ղազարէ անուանեալ թաղի մէջ յանուն
 սրբոյն Գեորգեայ. առաջինն 78 տուն ունի, և
 երկրորդն՝ 79 և մէն մի վիճակաւոր քահանայ՝
 ի Զուղայէ եկած ժամանակաւորապէս կը հովուեն:

« Այս սով և սղութիւն զամենայն կարգ և
 կանոն խանգարել է, ապա թէ ոչ՝ շատ լաւ ե-
 ղած են աստ Հայեր. բայց դժբաղդութիւնն առա-
 ւել այս է՝ որ մեծ մասն գինեւաճառութիւն կա-
 նէ նա և ոչ օրինաւոր խանութներու այլ տնե-
 րու մէջ, որ երբեմն ևս սաստիկ արգելք կը կանէ
 ձմախելոյ և կիման բացը: »

« Բաւական պաշտօնակալք կան, բայց փայ-
 լուն անուն միայն ունին, և արգարե դժբաղդ են.
 սովի ժամանակ շատ նեղութիւն քաշած են և
 քառասուն տան մօտիկ մօրաբով կամ ողոր-
 մութեամբ պահուել են: Երեւակայէ, կիժէ հա-
 ցի Հօխայն (3 ֆունտ) 10 կր.* և այն ևս
 դժուար ձարուի, օրը 2 հօխայէն մինչև 20ը հացի
 փող տուողը ի նշայէս կապրի: Միջակ կարգի ան-
 ձինք փճացած են, հարուստ և միջակ ալ չեն մը-
 նացած: միայն շատ հարուստներու չէ վնասած, և
 այնպիսիներէն ալ Հայ չունինք: »

« Ակարծուի որ՝ այս սովի և ողորմեան երեսէն
 միլիոն և կէս անձինք անտարակոյս սովամահ մե-
 ուած են: Իսկ հիւանդութիւնն կեղտոտութիւնէն
 յառաջացած է, ըստ որում գիւղացիք թափուե-
 լով ի քաղաքս՝ մերկ և բոսիկ՝ փողոցաց և աղ-
 բեաց մէջ դառններն կերել են. յայտնի բան է
 որ հիւանդութիւն պէտք է յաջորդէ: Եղել է ժա-
 մանակ՝ որ սովամահները թաղելոյ միջոց չեն ու-
 նեցած, և այսօր դեռ ևս փողոցներու մէջ մեռած
 մարդիկ պակաս չեն, և ի գիւղեմանատունս միշտ
 և անընդհատ գերեզման փորողներ կաշխատին: »

« Գոհութիւն Աստուծոյ, զի Հայք սուրբ եկե-

ղեցոյ մարտի քարոյականով խրատուած և ոգե-
 ւորուած լինելով՝ իւրեանց աղքատները հոգացել
 են ամեն քաղաքաց և գիւղօրէից մէջ: Այստեղի
 Ողորմող ագիոք երկու հազար (թումանի*) մօտիկ
 փող մխած է, և այժմ՝ փառք Աստուծոյ, մե-
 նակ երկու հարիւր թումանի չափ բաց ունի: Եթէ
 Ռուսիանակ սիրելի Ազգայնոցս նպաստը օգնու-
 թեան Հասներ 400 թուման պարտք կմնար:
 Չգիտցուիր, թէ այժմ որչափ պարտք պիտի գրու-
 նուի ի Զուղայ, թէ և Հնդկաստանցիք կօգնեն
 նոցա, այնու ամենայնիւ դարձեալ պարտք կու-
 նենան և զիցուք թէ պարտք չունենան. երբ հա-
 ցի փող չունին՝ ի՞նչ պէտք է անել, նոցա պէտք
 է օգնութիւն: Եթէ կարելի լինէր՝ և ժողովաբա-
 րութիւնը չղադարէր Վեհ. Հայրապետի շնոր-
 հիւ՝ մեծ բարեք կը լինի: Հաւատացէք, որ եթէ
 նուիրատուք և ողորմածք անձամբ տեսնեն այս
 ամեն թշուառութիւնքը, անշուշտ եմ՝ զի իւ-
 բեանց տուածին տաճարապետիկը ինքնայորդոր կը
 յաւելուին և կը տային: Աս ևս չէի հաւատալ,
 բայց տեսայ, և քանի կմտածեմ՝ աղիքս կը գա-
 լարուին և արտասուքս հոսելով յականողեաց՝
 դրիշտ կողորդէի և չզօրէ նկարագրելոյ: Մի մեծ
 յոյս այս ևս է, զի այս տարի առատութիւն շատ է,
 որիցէ հացի հօխայն 40 փարայ (6 կպ) անկանի
 որ դարձեալ շատ է գիւղացւոց համար: Առայժմ
 վերջացնեմք զայս՝ աղաչելով զԱստուած և յու-
 սալով՝ որ յետ այսորիկ լաւ լինի: »

« Այս տեղի Ազգ. զպրօքը շատ լաւ է տեղւոյս
 նկատմամբ: Գեր. նորբնտիր Առաջնորդ խրնդ-
 րեց Արեղակնափայլ և Օգոստ. Շահէն տարեկան
 100 - 200 թուման ուժիկ յատուկ հրովարտա-
 կով շնորհել այս զպրօքին՝ ինչպէս որ Գալիթի
 Ազգ. զպրօքին համար խնդրած է հանգուցեալ
 Սահակ Եպիսկոպոս և ընդունած է, որ կշարու-
 նակուի: Երբ յաջողի Աստուծով՝ աւետար կը
 փութամ տալ: - 20 անձինք ընկերութեամբ
 իւրեանց վերայ ստանձնած են զպրօքի նիւթական և
 ուսումնական կառավարութիւնը և պիտոյքը հո-
 ցող և ուսանող Հայ տղայքը առանց խտրու-
 թեան ուսում կառնուն: Այս զիրքը վատ չգտայ:
 Բազմ ունեցել են՝ զի Պօլսեցի Գասպարեան աղ-
 գանուամբ 30 տարեկան աշխոյժ մի երիտասարդ
 անձ յաջողել են ձեռք բերել աստ, որ Գաղղիա-
 բէն ևս կկարդացնէ: Աստ այնպիսի տեղ է՝ որ
 եկողը դժուարաւ կարէ կանել արտաքս, վասն
 զի ճանապարհի ծախսը խորհելով՝ կյուսահա-
 տի և կմնայ: Ասի թէ և դասատուին դժբաղ-
 դութիւն է, բայց Թէհրանու Ազգ. մանկաւոյն
 մեծ բաղդ է. օրինաւոր ընթացք ունի: Քանի
 անգամ Գեր. Առաջնորդ կաղմեց հանդէսներ ո-
 բով առաւել քաջալերուեցան: »

(*) Մի թուման կարժէ էրը 2 ուրիկ 30 կպ. կամ 2
 արծ Գէշիս:

(*) Մի կրամն է 28 կպ. կամ էրը 4 զանեկան:

«Այս ազգային տեղեկութիւններէն զատ՝ հետեւեալն ևս Պարսից հոգեորականութեան համար աւելորդ չեմք համարիլ ի հրատարակութիւն,

«... Ասոնց (Պարսից) հոգեորականութիւնը պաշտօնական դասակարգութիւն չունի, այլ անձին արժանեօքն է։ Միայն Քեյլէշայ կոչուած ուխտատեղին նստող հոգեորականը ամենէն զբաղուի համարուի։ հոգեորականաց այս դիրք շատ դժուար է կառավարութեան համար, շատ նեղութիւն կը քաշէ։ Այժմ... երկու մեծ հոգեորականը կան, միոյն խոմ ծառայ կատար, որ Ուլթաշէ իմամն (կարդացող կամ օրէնագէտ) է։ աս որդւոց որդի է և թագաւորական հրովարտակով հաստատուած է, բայց չունի կետրոնականութիւն՝ բոտ որում անձին արժանեօքն լինել վերե գրեցի քեզ, — և դեռ 30 տարեկան չկայ։ Իսկ միւսն սրբազան անձ համարուել է Պարսից մէջ, և նորա վճիռքը յարգելի են։ սա կկոչուի Ուլթաշէ։ Սէիտ բառը իւրեանց մարգարէի սերնդոց տիտղոսն է՝ սոքա խիստ շատ են, որոց մէջ աշխարհական կարգէ անձինք ևս կան։ սոցա նշանն է կանաչադոյն և կապոյտ փաթկոց կամ գօտի։»

ՄՈՎՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆՅԻ ՎԱԽԱՆԻԼ.

Մի հասարակութիւն որչափ որ բաղտաւորվում է իւր նիւթապէս և բարոյապէս պիտանացու անդամների բազմանալով, նոյնչափ ևս անբաղտանում է նա այնպիսիներից զրկուելով։

Մի այսօրինակ անբաղտութեան ենթարկուեց մօտ օրերս մեր Շամախուց Հայ հասարակութիւնը որը ոչ սակաւ ցաւալի և կսկծալի եղաւ, զրկուելով իւր մի այնպիսի աղնիւ և պիտանացու Անդամից որ իւր կազմութեան մէջ նշանաւոր տեղ էր բռնում իւր եկեղեցատէր և ազգատէր ազնուաբարոյութեամբը։ Սա էր պատուաւոր քաղաքացի Իշխան Մովսէս Ներսէսեանցը, որ կէքից իւր երկրաւոր կեանքը ամառոյս 12ին յետ կեսաւոր 2րդ ժամին։

Ես սորան իշխան անուանեցի, ընթերցող, ոչ այն հասարակեալ սովորութեամբ, որով անուանվում են շատ մարդիք իւրեանց անպէտք դրամաւոր հարստութեան համար, այդ հակառակ է իմ գաղափարին, այլ նորա բարոյական հարստութեան համար, որ ունէր նա նիւթականի հետ միասին և որոնք բաշխում էր նա անխնայ մեր ազգի և եկեղեցւոյ բարոյական և նիւթական շինութեան համար։ Սորա ծննդատեղին լինելով Շամախուց 56 վերստ հետի գտնուած Գիրք գիւղը, ուստի և այն տեղ անցուցած լինելով իւր մանկութեան օրերը և երիտասարդութեան ժա-

մանակի մի մասը՝ անցայտ են ինձ դորա կեանքի այդ ժամանակամիջոցի գործերը՝ միայն սորանից 45 տարի յառաջ դորա այս քաղաքը գաղթելուց զինի յայտնի և նշանաւոր է եղած դա ոչ միայն Շամախում այլ և Ռուսաստանի երեւելի քաղաքներում գտնուած թէ մերազնեից և թէ օտարազգացը իւր խաղաղատէր կենցաղաւարութեամբ և անհատական բարի և աղնիւ յատկութիւններով։ Գորա անխնայ և բարեկատու գործունէութիւնը հասուցել է դորան նշանաւոր նիւթական հարստութեան, իսկ դորա մարդասիրական եկեղեցասիրական և ազգասիրական զգացմունքները և գործերը, որոնք արտափայլել են զանազան հանգամանքներում հասուցել են դորան «Հայ իշխան», անուան համբաւոյն և պատուին։ Բանի որ ես եղած եմ Շամախում չեմ կարողանում մտաբերել մի Հայկական ժողով կազմուած յօգուտ ազգի և եկեղեցւոյ, որին պարագլուխ անցած չլինէր բարեկիշատակ հանգուցեալ և իւր «Իշխան», անունը հաւատարմացրած չլինէր բանի և գործով օգտամատոյց լինելով հասարակութեան բարի ձեռնարկութեանը, իսկ նորա աստուածսիրութեան յայտնի և գլխաւոր ապացոյց կարող է լինիլ նորա 1850 թուին այս քաղաքում կառուցած փառաւոր ծառարը աստուծոյ իւր մեծ եղբոր արժանախշատակ հանդուցեալ Պ. Պետրոս Ներսէսեանցի հետ միասին իւրեանց արգաւազատակ սեպհական ծախքով, իւրեանց վնահանքն բնաւորութեամբ արհամարհելով այն ամէն արգելքները, որոնք սովոր են պատահիլ շատ անգամ անախորժ հանգամանքներից։ Այս ամենի փոխարէն վարձատրուել էր նա Ամենաբարձրիւց լինելով հայր մի բարեկեցիկ քրիստոնիսի գերդաստունի որից աւելի երջանկութեան չէ կարող սպասիլ մահկանացու քրիստոնիայն այս աշխարհիս մէջ։ Թօղուածս չերկարացնելով պատմեմ դորա թաղման հանդէսը։ Այս հանդէսը կատարուեցաւ նորա մահուան հետեւեալ օրը փառաւոր կերպով, ինչպէս կ'իշխէր մի բարի մարդոյ և բարի քրիստոնէի մահուան համար։

Պատարագամատոյցն էր ինքը տեղւոյն Առաջնորդ Անդրէաս Արքեպիսկոպոսը, զինի պատարագին հոգեհանգստեան կարգը կատարելու ժամանակ եղաւ դամբանական ատենաբանութիւն։ Սուրա տխուր միանգամայն շքեղ յուղարկաւորութեանը մասնակից էին համարեայ քաղաքիս Հայ հասարակութիւնը, նոյնպէս և ոչ սակաւ օտարազգիք։ մինչև նորա զերեզմանը, որ պատրաստուած էր իւրաքէն տաճարի սրահում կից իւր հանգուցեալ եղբոր զերեզմանին, այս տեղ կարգացուեցաւ և մի դամբանական ճառ ի դիմաց մանուկների և պատանիների քաղաքիս դէպի իւրեանց բարեբար իշխանը, նոյն ամառ 16 նոյնպէս պատարագ մատուցաւ ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն, զինի որոյ և մեծածախ հացիկորդ-